





Լաւ վերաբերմունք: Սաիտի պատմութիւնը



Լաւ վերաբերմունքը մօտեցում մըն է, որուն նպատակն է յարգել բոլոր անձերը՝ իրենց կարիքները, բաղձանքները և ընտրութիւնները, ներառեալ անոնց մերժումները:
Այս մօտեցումը կը դրսևորուի համագործակցային և ուշադիր վարքագիծով, վերաբերմունքով, հաղորդակցական հմտութիւններով և գործելաձևով, որոնք կը յարգեն անհատի արժէքները, մշակոյթը, հաւատալիքները, կեանքի պատմութիւնը և անհատական իրաւունքներն ու ազատութիւնները: ¹



Ահա տարեցներու հանդէպ լաւ վերաբերմունքի ուղեցոյց սկզբունքները: ²

Այս սկզբունքները նաև կը կիրառուին տկար իրավիճակի մէջ գտնուող չափահաս անձերուն:

1. Անձը պահել գործողութիւնների կենտրոնում:
2. Տարեցներուն աջակցել իրենց ինքնորոշման և հզօրացման մէջ, որպէսզի կարենան վերահսկել իրենց կեանքը և որոշումներ ընդունել, որոնք համապատասխան են իրենց արժէքներին, կեանքի ոճին և մշակոյթին:
3. Հարգել անձը և անոր արժանապատուութիւնը, որպէսզի նա զգայ, որ իր տեսակէտները հաշուի առնուած են և նա վերագտնի իր ինքնագնահատականը:
4. Քաջալերել տարեցները հասարակական կեանքին արժանաւոր և գործուն մասնակցութիւն ունենալու, որպէսզի նրանք յաղթահարեն միայնութիւնը և բարձրացնեն իրենց բարեկեցութիւնը:
5. Կիրառել այնպիսի գործողութիւններ և փոխազդեցութիւններ, որոնք միաւորեն հմտութիւնները և դատողութիւնը (գործելաձև և իմացք):
6. Նպաստել համակարգուած աջակցութեամբ՝ տարեցի կեանքի տարբեր ոլորտներուն համապատասխան ամենաճիշտ քայլերը ձեռնարկել (օրինակ՝ բնակարան, առողջութիւն, սնունդ, սէր և ընտանեկան կեանք), միշտ յարգելով տարեցի ընտրութիւնները:



Լաւ վերաբերմունքը պաշտպանիչ գործոն է վատ վերաբերմունքի դէմ:

Եթէ զգաք, որ ձեզ հետ վատ վերաբերմունք կը ցուցաբերեն, կամ եթէ ակնհայտես ըլլաք, զանգեցէք Վատ վերաբերմունքեան օգնութեան գիծ՝ 1-888-489-2287:

Եթէ ձեր ապահովութիւնը վտանգի տակ է, զանգեցէք 911:

1. Յղումի հիմք Լաւ փոխգործակցութիւն հաստատել բոլոր տարեցներուն հետ՝ բոլոր միջավայրերու և իրավիճակներու մէջ, բաժին 1, էջ 3:
2. Յղումի հիմք Լաւ փոխգործակցութիւն հաստատել բոլոր տարեցներուն հետ՝ բոլոր միջավայրերու և իրավիճակներու մէջ, բաժին 1, էջ 5: